

ՈՂՋՈՒՅՆ ՆՈՐ ԲԱՑՎԵԼԻՔ ՀՈԴԵՎՈՐ ՇԵՄԸԲՇԽԻՆ

«Էջմիածին» ամսագրի անցյալ տարվա վերջին հոկտ. նոյեմբ. դեկտ. միացյալ Համարում մեծ գոհունակությամբ կարդացինք ծանուցում Ս. Էջմիածնի նոր բացվելիք հոգևոր ճեմարանի ընդունելության պայմանների մասին։ Ուրիշն արդին իրականություն է, որ Հոգևոր ճեմարանը չուտով կրացվի և կդորձի այն ծրագրով, որ մեր հոգևոր բարձր իշխանությունը կառաջարձրի։ Ենելով ընդունելության պայմանների այն կետից, որ ճեմարան կարող են ընդունվել թե միջնակարգ և թե բարձրագույն կրթություն ստացած անձինք, պետք է ենթադրել, որ նոր ճեմարանը մասնագիտական բնույթ կունենա, առավելություն տալով կրոնական-եկեղեցական առարկաներին, որոնց այնքան անհրաժեշտ են հոգևոր պաշտոնյաների համար՝ լինեն նրանք կուսակրոն հոգևորական, թե ժիական քահանա։ Վեցամյա դասընթացը միանդամայն բավական է եկեղեցու համար կրթված արժանավոր հոգևորականներ տալու։

Մեր ներկա իրականության մեջ, երբ ունենք սեփական հայկական պետություն, երբ եկեղեցին ազատ է իր հոգևոր գործերն ինքը տնօրինելու, առավել ևս հեշտանում է հոգևոր ճեմարանի գործը։

Ինչպես հայտնի է, Հոգեկույս Գևորգ Դ. կաթողիկոսը նախկին ճեմարանը հիմնեց 1874 թվին։ Ճեմարանը բաղկացած էր երկու մասից՝ դպրոցական և լսարանական։ Դպրոցական բաժնի ծրադիրը համապատասխանում էր մեր մյուս թեմական դպրոցների ծրագրին, իսկ մասնագիտական-լսարանական բաժնին ուներ երեք առարկա՝ կուրսում ամենալավ արժանավոր կարդացուած էր այսպիսի մասնագիտական դպրոցը։

Նով երեք լսարան։ Ճեմարանավարության մասնակացվում էր մասնադիրական բաժնի ավարտման դիպլոմ ունեցողը։

Հայտնի է նույնապես, որ հոգևոր կոչում ունենալով հանդերձ հին ճեմարանը, ինչպես և մեր մյուս թեմական դպրոցները, միայն հոգևորականները չեն պատրաստում, այլ նաև ուսուցիչները, մանկավարժները, որոնց կարիքը մեծ էր հետզհետե բաղմացող մեր դպրոցների համար, ուստի և մանկավարժական առարկանները բավական մեծ տեղ էին բռնում նրանց ծրագրում։

Պահենք արդյոք այժմ այդ պահանջը։ Կարեկն ոչ, որովհետև այժմ հանգանանք ները միանդամայն փոխվել են։ Մենք ունենք պետություն, ազրում ենք պետական կյանքով և մեր բաղմազան կարիքները հոգում է մեր պետությունը իր բազմաթիվ և նույնապես բաղմազան կրթական միջնակարգ և բարձրագույն հաստատություններով։ Դրանից հետևում է, որ նոր բացվելիք Հոգևոր ճեմարանի առաջդիմում են միանգանայն նոր պահանջներ, միանդամայն նոր պարտավորություններ, որոնք բղխում են մեր եկեղեցու նոր և ազատ իրազարձություններից— մեր եկեղեցու համար պաշտոնյաներ պատրաստելու, հանձնատացյալ ժողովրդին կրթած հոգևոր կողմէուրականներ տալու պարտավորություններ։ Ինչո՞վ պիտի օժոված ինի մեր այժմյան ճեմարանավարած։ Երկու գլխավոր հատկություն պետք է զարդարի նրան։ Եկեղեցակրությունը և հայրենականիրությունը։

Ինչպես ամեն առարիջում, այնպես էլ այստեղ, Հոգևոր ասպարիզում գործողը պետք է ըստ ամենայնի սիրի իր դործը,

իր պաշտոնը և մաքրափայլ կենցաղավար-
բությամբ բարեւ օրինակ հանդիսանա իր
ձմջապատի համար:

Երկրորդ հատկությունը՝ հայրենասիր-
բությունը մեր հոգեվորականների զարդը
պետք է կազմի: Հայ եկեղեցու պատմական
անցյալը տվել է հայրենասիրության օրի-
նակներ: Հիշենք Վարդանանց ժամանակվա-
մեծ հայրենասեր Ղելմոնդ Երեցին, 19-րդ
դարի հոգևորականներից՝ Ներսես Աշտա-
րակցուն և Գրիգոր Եղի. Մանուչարյանին,
որոնք անձնուրաց պատրաստակամությամբ
մեծ օգնություն են հասցրել ռուսական
բանակներին Արարատյան աշխարհը ապր-
դարների լծից արտակըլու համար: Հիշենք
Խրիմյան Հայրիկին ու Մատթեոս Բ. կա-
թողիկոսին, որոնք իրենց ամբողջ կյան-
քում՝ արևայրությունից մինչև կաթողիկո-
սությունը՝ հայրենիքի սիրով են վառված-
եղել, արևաշող Հայաստանի և նրա ժողո-
վորութիւն սիրով և հանուն այլ սիրով ամեն
նեղություն ու զրկանք հանձն առել իրենց
վշտու ասպարեզում սուլթանական թուր-
քիայի ղամբան պայմաններում: Ներկայումս
մեր կյանքում չկան դաժան պայմաններ:
Սակայն անակնկանին միշտ կարող են լի-
նել և հայրենիքը միշտ կարող է վտանգի
ենթարկվել, ինչպես ականատես եղանք,
երբ Փաշիստական վոհմակները դադուղու-
զի ներխուժեցին մեր երկիրը:

Փորձության այլպիսի ժամերին հայ-
րենասեր հոգևորականը առաջին օրինակը
սիրով լինի հայրենիքի փրկության գոր-
ծում: Հենց արս մեծ հայրենական պատե-
րազմում Ամենայն Հայոց Հայրապետու-
թյան Աղջնտիր Տ. Տեղակալը հայրենա-
սիրության փայլուն օրինակը հանդիսացավ
Հայ հոգեվորականության մեջ: Ամեն տեղ,
թե՛ Հայաստանում, թե՛ մեր մեծ Միու-
թյան առամաններում և թե Սփյուռքում
ապրող հայտացյալ հայությանը հորդոր
կարդաց ամեն կերպ օգնելու մեր առաստա-
րար Կարմիր Բանակին փառքով ու Հայ-
թանակով առարտելու իր սրբազն առաքե-
րաթյունը իսպատ ոչնչացնելու քաղաքա-
կրթության կերծ քողի տակ ծածկված

իսկական բարբարոսների և միջնադարյան
խալիարի ողով վարակված հոների գարշե-
լի գոյությունը: Եվ ուրախությամբ ար-
ձանադրում ենք, որ Տ. Տեղակալի կոչը
ներմ արձագանք դատավ բոլոր Հայ հոգեո-
րականության և հավատացյալների շրջան-
ներում: Տ. Տեղակալի հայրենասիրության
այս դեղեցիկ օրինակը պետք է համարի
ամենուրեք դանված Հայ հոգևորականնե-
րին՝ նմանվելու նրան և նրա պես ու նրա
ողով վրած ելու: Հայրենասիրական արք ո-
ղին վաս ու բորբոք պիտի մնա նոր բաց-
վելիք ճեմարանի սաների մեջ: Զերոց հայ-
րենասիրություն և ուսման բուն տեղնչ,
այս երկու բարեմասնությունը պետք է
զարդարեն նոր ճեմարանականին:

Հին ճեմարանը գիշերօթիկ դպրոց էր:
Հայրյուրավոր աշակերտներ միասին էին
ասլրում մի մեծ ընտանիքի պես միւսույն
ուսեմիմով: Բնականաբար նրանք հենց դու-
տարված ակնքից պատանեկան հասակին հա-
տուկ ընկերական չերմ սիրով կարլում
էին իրար հետ: Շատ հուզիչ օրինակներ
ենք տեսել, մինչև անձնուգացության հաս-
նող, որ հացմունք է պատճառել: Այս
անկեղծ ընկերասիրությունը, որն ընդհան-
րապես զեպի մարդասիրություն և Հայրե-
նասիրություն է տանում, ցանկալի է, որ
բուն դնի նաև նոր բացվելիք ճեմարանում
և մշտապես շաղկաւով նրա նոր սաներին
կյանքի բոլոր սարսադաներում:

Ազատ լինելով տնտեսական ամեն տե-
սակի հոգեցից, բնականաբար, ճեմարան-
ցին իր աշակերտական կամ ուսանողական
կյանքի ընթացքում օրինակելի աշակերտ
էր և ուսանող: Ճեմարանում ամոթ էր Հա-
մարվում երկու տարի նստել նույն դասա-
րանում, որովհետեւ ամեն բան պատրաստի
ստանալով նա դիտակցում էր, որ պետք է
արդարացնել իր վրա ծախսած դումարնե-
րը ու օրինակելի աշակերտությամբ և ուս-
ման սիրով փոխարենը հատուցել: Բացի
ընթացիկ զաները բարեխուզությամբ սովո-
րելուց, ճեմարանցին շատ էր կարգում:
Իրենց ուսուցիչների զեկավարությամբ ա-
շակերտաները ճեմարանի գրադարանից վերց-

նում էին անհրաժեշտ գրքեր գրականության, պատմության, աշխարհագրության և այլ ավանդվող առարկաների վերաբերյալ և դրանց չնորհիվ բազմակողմանիորեն ծանոթանում թե դպրոցական և թե լսարանական բաժնում ավանդվող առարկաների հետ։ Հայերենի հետ հավասար ճեմարանցին ազատորեն օպտվում էր, նաև ոռուերեն իրավով եղած հարուստ գրականությունից։

Բացի պարտադիր երկու լրիվ ժամեց, 20 բողեք ընդհատումով, որոնք երեկոները հատկացվում էին հաջորդ օրվա դասերը սովորելու համար (այդ ժամերը սերտողություն էին կոչվում), ճեմարանցին մը նացած աղատ ժամերին ևս շատ էր աշխատում, դրում-կարդում այնքան շատ, որ դժվարությամբ էր բաժանվում գրավոր աշխատանքից կամ կարդացած գրքից, երբ պարտադրաբար որոշակ ժամեն զանդը հնչելուն պես պետք է ննջարան դնար քննելու։ Շատերը սովորություն ունէին առավոտները որոշակ ժամեց էլ ավելի կանուխ վերկենալ և ընթերցանությամբ կամ ուսուցչի տվյալ բաժան գրավոր աշխատանքով ըդրանդվել։ Երկար տարիներ ճնարով ճեմարանում և վարժվելով ժամերով նստել մի զրքի կամ գրավոր նյութի վրա, բնականաբար այս դեղնեցիկ հատկությունն այնուշետև անբաժան էր մնում ճեմարանցուց, որը ընակատար դասընթացն ավարտելուց հետո էլ կյանքի մեջ իր ընտրած ասպարեզում, մեծ մասամբ հոգեկվոր կամ ուսուցչական, պիտանի և բեղմնավոր մշակ էր դասոնում մեր այն ժամանակվա հոգեկվոր և մտավոր անդաստանում։ Եվ մեր ջերմ փափազն է, որ ուսման սիրո այն ծարակն ու տենչը, որ ուներ հին ճեմարանցին, փախանցվեր նոր ճեմարանցուն։

Թուղ նոր ճեմարանի սաները արդյունավոր կերպով անցկացնեն այն վեց տարին, որ նրանց տրվում է ուսման լիակատար դասընթացն ավարտելու համար։

Հին ճեմարանի ուսուցչական կազմի կազմը էր սաների հետ շատ զերծ էր ձե-

մարանի ուսուցիչները շատ էին կապված իրենց աշակերտների և ուսանողների հետ, նրանցից շատերը իրենց ազատ ժամերին դասերից դաւրս ևս զալիս էին ճեմարան և հանախակի դրուցում իրենց աշակերտների հետ։ Հաճախ նրանք մասնակցում էին աշակերտական ընդհանուր զբոսանքներին դեպի ձեռաւունկ մեծ անտառը կամ Վաղարշապատի ընդարձակ այգիները, Քասախի, Արաքսի ափը, Թարդմանիչների տոնին Օշական և այլուր ու այսպիսով միասմաղաղ կյանքով ապրող գիշերովիկ դրաբոցի սաների կենցաղի մեջ թարմություն մտցնում և նրանց էլ ամելի մեծ սիրով կապում Մայր—ճեմարանի հետ։ Նոր տարին ամբողջ աշակերտությունը զիմավորում էր անսպատճառ ուսուցչական կազմի հետ և մինչեւ ուշ գիշեր ուրախ ժամանակակից անցկացնում ընտանեկան ու մտերմական այս հավաքություն։

Մեր ցանկությունն է, որ նոր բացվելիք հոգեկոր ճեմարանի ուսուցչական խումբը նույնական սերտ սիրով կապվի իր սաների հետ և պաշտոնական ժամերից դուրս ևս հաճախակի այցելի նրանց և իր խորհուրդներով ցանկալի ուղղություն տա ուսման ծարավոր տողորված ու միւննույն կյանքով ապրող գիշերօթիկ սաների մտքի ընթացքին։

Ամելացնենք և այն, որ հոգեկոր ճեմարանը, գանվելով Մայր-Աթոռում՝ Ս. Էջմիածնում, Արարարտյան դաշտի համարյա կենտրոնում, բնության գեղեցկության տեսակետից ևս նախանձելի տեղադրություն ունի։ Ծնդարձակ Արարարտյան դաշտը, վիթխարի Մասկան ու հակա Արագածը և սրանց հետ չուրջապար բռնած մյուս լեռները՝ սրանք բոլորը միասին իսաղաղ, հանգիստ տրամադրություն են ստեղծում ճեմարանում ապրողի համար։ Այսուել հընարավոր չէ ճամփրանալ, զանդառավել նեղ հորիզոնից, երկարատև ամպամածությունից կամ ավելորդ անձրևներից։ Բայլական է թեկուզ մի անդամ Ներսիսյան լճի ափից

գիտել անման, երկարատև բազմազան գույներով ցոլացող ու վասվող՝ արևմուտը, վերջալույսը՝ և դա երբեք չի մոռացվի մինչև կյանքի վերջը։ Սքանչելի այս ընունությունն է գործում այնտեղ ապրողների վրա։

Ի սքտէ ցանկանում ենք հաջողություն նոր բացվելիք հոգևոր ճեմարանին, նոր անդրանիկ սաներին ու դասախոսներին, որոնք մեծ ոգևորությամբ վառված կը թյունը ևս իր բարերար ազգեցությունն է վեն իրենց պատասխանատու աշխատանքին։

ՀՕՎԱԵՎՈՒԹՅՈՒՆ

